

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ
ԵՒ ԻԿՈՆԻԱՅԻ ՍՈՒԼԹԱԽՈՒԹԵԱՆ
ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ
||
(1220ական թուականներ)

Կիլիկեան Հայաստանի պատմութեան մէջ առանցքային է վերջինիս արտաքին քաղաքականութեան եւ դիւանագիտութեան պատմութեան ուսումնասիրութիւնը: Հայկական թագաւորութիւնը ժԳ. դարի քսանական թուականներին գտնուում էր աշխարհագրական այնպիսի միջավայրում, որտեղ միջազգային իրավիճակը շարունակուում էր մնալ լարուած, եւ Հայկական թագաւորութեանը մշտապէս սպառնում էին հարեւան պետութիւնները: Վտանգաւոր հարեւաններից առանձնանում էր յատկապէս իկոնիայի սուլթանութիւնը: Այս պետութիւնը դեռեւ Լեռոն Մեծագործի թագաւորութեան ժամանակաշրջանում բաւականին անհանգստացրել էր Հայկական թագաւորութեանը: Այդ իրավիճակը շարունակուեց նաեւ ժԳ. դարի քսանական թուականներին: Ստեղծուած պայմաններում չափազանց կարեւոր էր, որ Հայոց թագաւորութիւնը կիրառի արտաքին ճիշտ քաղաքականութիւն, որպէսզի երկիրը չայտնուի լուրջ խնդիրների առջեւ:

Կիլիկեան Հայաստանի եւ Իկոնիայի սուլթանութեան յարաբերութիւնների պատմութեան մասին որոշակի տեղեկութիւններ են Հաղորդում ինչպէս Հայ, այնպէս էլ օտարազգի պատմիչները: Նրանցից իմանում ենք, որ Իկոնիայի սուլթանութիւնը հզօրացաւ յատկապէս սուլթան Ալա էդ-դին Քեյ-կոբադի թագաւորութեան տարիներին (1220-1237), որի վճռական գործողութիւնների շնորհիւ այդ պետութիւնը հասաւ իր հզօրութեան գագաթնակէտին: Ինչպէս վկայում է միջնադարի ասորի պատմիչ Աբուլ Ֆարաջը, Ալա էդ-դին Քեյ-կոբադը աչքի էր ընկնում թէ՛ իր արտաքինով եւ թէ՛ խելքով ու կառուցուածքով¹:

1 The Chronography of Gregory Abul Faraj, (Bar Habraeus), vol. A, London, 1932, p. 402.

Նշենք նաեւ, որ Կիլիկիայի հայոց թագաւորութիւնը խընդիրներ ունէր ոչ միայն արտաքին, այլեւ ներքին քաղաքական կեանքում։ Բանն այն է, որ Լեւոն Մեծագործի մահից յետոյ գահը ստանձնելու համար պայքար էր ծաւալուել մի խումբ յաւակնորդների միջեւ։ Բնականաբար, նմանատիպ պայքարը եւ իրավիճակը չէին կարող բացասական ազդեցութիւն չունենալ երկրի արտաքին քաղաքական դիրքորոշումների վրայ։ Լեւոն Մեծագործի եւ սուլթան իզ էդ-դին Քեյ-քաւուսի միջեւ 1218 կնքում է հաշտութեան մի պայմանագիր, որի մի շարք դրոյթներ գործնականում չէին իրագործւում։ Պայմանագրի կնքումից անմիջապէս յետոյ հայոց արքան հրաժարում է մասնակցել Իկոնիայի սուլթանութեան՝ դէպի Հալէպ արշաւանքին եւ որոշ ժամանակ անց մահանում է։ Իզ էդ-դին Քեյ-քաւուսի յաջորդը՝ Ալա էդ-դին Քեյ-կորադը, որոշում է վերականգնել 1218 պայմանագիրը եւ ստիպում է հայերին ընդունել սուլթանութեան գերիշխանութիւնը։ Բացի այդ՝ Իկոնիայի սուլթանութեան համար Կիլիկիայի հայկական թագաւորութիւնն ունէր աշխարհագրական կարեւոր դիրք։

ԺԳ. դարի քսանական թուականներին սկսում են մի շարք ռազմական գործողութիւններ Կիլիկեան Հայաստանի եւ Իկոնիայի սուլթանութեան միջեւ, եւ այդ պատերազմում հայկական թագաւորութիւնը ունենում է մեծ կորուստներ։

Իկոնիայի սուլթանութեան գօրքերը 1221ին արշաւանք են ձեռնարկում Կիլիկիայի հայկական թագաւորութիւն, ներխուժութում են երկրի սահմանները եւ գրաւում մի շարք տարածքներ²։ Հետաքրքրական է Աբուլ Ֆարաջի տրամադրած այն փաստը, համաձայն որի՝ նշեալ արշաւանքի պատճառ է դառնում հայկական թագաւորութիւնում տիրող անկայուն վիճակը, որից էլ օգտում է իկոնիայի սուլթանը³։ Ըստ մեզ՝ Աբուլ Ֆարաջի հաղորդումը կարող է ճշմարիտ լինել, քանի որ Իկոնիայի սուլթանութիւնը, գիտակցելով, որ այդքան էլ ամուր չի գործում 1218ի հաշտութեան պայմանագիրը, վճռում է մի նոր արշաւանք կատարել՝ վերհաստատելու հայկական թագաւորութեան ենթակա-

2 Տե՛ս ՅԱԿՈԲԵԱՆ, Վ., Մամր ժամանակագրութիւններ ԺԳ.-ԺԹ. դարերի, հտ. Բ., Երևան, 1956, էջ 64: Ժամանակագրութիւն տեսում Միջնայդի Ասորւց պատրիարքի, Երուսաղէմ, 1870, էջ 526: ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, Ա.., ԺԳ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Երևան, 1986, էջ 125:

3 The Chronography, անդ:

յութիւնը: Այդ գործին կարող էր մեծապէս օգնել հայոց թագաւորութիւնում տիրող խառը եւ անկայուն իրավիճակը:

1221ի արշաւանքով իկոնիայի սուլթանութիւնը հայերից առգրաւում է Կալոնորոսից մինչեւ Կոռիկոսի մօտակայքն ընկած տարածքները, որոնք Կիլիկիայի հայկական թագաւորութեան ամենաբարեբեր հողերի մի մասն էին: Այդքանով երկու կողմերի միջեւ ռազմական գործողութիւնները չեն աւարտում: 1222ին նրանց արշաւանքը կրկնուում է, որի հետեւանքով թշնամու զօրքերը գրաւում են Սեւելիան. «ՌՄԻԲ (1222) Ալատին սալտանն էաո զՄիկիլա կոռուով»⁴: Այս արշաւանքից յետոյ հայոց թագաւորութեան վիճակն աւելի է բարդանուած:

Ուշադրութեան է արժանի իկոնիայի սուլթանութեան պատմութեան հետազօտող կ. Կաենի այն տեսակէտը, համաձայն որի՝ սուլթան Ալա էդ-դին Քեյ-Կորադին յաջողւում է հարեւան քրիստոնեայ փոքր պետութիւններին՝ Կիլիկեան Հայաստանին, Վրաստանին եւ Տրապիզոնին, վասալական որոշ կարգավիճակ պարտադրել կամ նրանց իր դաշնակիցը դարձնել: Այս առնչութեամբ հետաքրքիր է Լ. Տէր-Պետրոսեանի դիտարկումը: Հետազօտողը գտնում է, որ հայերի առերես հաւատարմութիւնը ժամանակաւոր բնոյթ էր կրում, քանի որ վերջիններս միասնական ճակատ ստեղծելու նպատակով ակտիւ դիւանագիտական քայլեր են ձեռնարկում՝ Բիւզանդական կայսրութեան հետ մերձենալու ուղղութեամբ⁵: Կիլիկիայի հայկական թագաւորութիւնն ամէն ջանք գործադրում էր վասալական կախուածութիւնից դուրս գալու համար: Այդ են վկայում նաեւ ականաւոր գիտնական Հ. Բարթիկեանի մի շարք հետազօտութիւնները⁶:

Հարկ ենք համարում յաւելիլ, որ 1220ական թուականներին կտրուկ բարդացան Կիլիկեան Հայաստանի եւ Անտիոքի դքսութեան յարաբերութիւնները: Դրանց պատճառով հայկական թագաւորութեան արտաքին քաղաքական դրութիւնը խիստ վա-

4 ՅԱԿՈԲԵՍ.Ն, Վ., անդ, էջ 64:

5 CAHEN, C., *Pre-Ottoman Turkey*, London, 1968, p. 133 - յղումը կատարուած է Տէր-ՊԵՏՐՈՍԵԱՆ, Լ., ԽաչակիրՅերը եւ հայերը աշխատութիւնից, Խտ. Բ., Երեւան, 2007, էջ 300:

6 Տէր-ՊԵՏՐՈՍԵԱՆ, Լ., անդ, էջ 301:

7 ԲԱՐԹԻԿԵԱՆ, Հ., Հայ-բիւզանդական հետազօտութիւններ, Խտ. Գ., Երեւան, 2006, էջ 27-63:

տացաւ: Խնդիրն այն է, որ հայ իշխանները 1224ին բանտարկում են Ֆիլիպին Թիլ-Համդունի բերդում⁸: Այդ իրավիճակում Ֆիլիպի հայրը՝ Բոհեմունդը, պապից թոյլտուութիւն է խնդրում Կիլիկեան Հայաստան արշաւելու համար: Մերժում ստանալով՝ նա դաշնակցում է Իկոնիայի սուլթանութեան հետ, եւ նրանք 1225ին համատեղ ուժերով յարձակում են Կիլիկիայի հայկական թագաւորութեան վրայ:⁹

Ինչպէս բացատրել Իկոնիայի սուլթանութեան նման դիրքորոշումն ու վարքագիծը: Յայտնի է, որ 1221-1222 նրանք մի շարք արշաւանքներով արդէն զաւթել էին հայկական թագաւորութիւնից մի շարք տարածքներ եւ ստիպել հայերին ընդունելու իրենց գերիշխանութիւնը: Ամենայն հաւանականութեամբ այդ վասարական կախուածութիւնն այնքան ամուր չէր, եւ իկոնիայի սուլթանութեանը յայտնի էր դարձել այն փաստը, որ հայերը գաղտնի կերպով փորձեր են անում կապեր հաստատել Բիւզանդական կայսրութեան հետ, որը, անշուշտ, ցանկալի չէր իկոնիայի սուլթան Ալա Էդ-Դին Քեյ-Կոբադին: Բացի այդ՝ Իկոնիայի սուլթանութեան նոր տարածքային նուաճումներից յետոյ երկու կողմերի միջեւ գեռեւս չէր կնքուել հիմնական պայմանագիր: Իբն Ալ-Ասիրը բաւականին խորութեամբ նկարագրում է դաշնակիցների արշաւանքը դէպի Կիլիկեան Հայաստան, որի ընթացքում թշնամու զօրքերը գրաւում են 4 բերդ, սակայն ձմռան գալուն պէս նահանջում¹⁰: Յաւօք, պատմիչը, նկարագրելով վերը նշուած արշաւանքը, չի նշում այն բերդերի անունները, որոնք ժամանակաւորապէս գրաւուեցին դաշնակիցների զօրքերի կողմից: Այդ մասին մեզ որոշակի տեղեկութիւններ է տրամադրում պատմիչ Միքայէլ Ասորին: Նա հաղորդում է, որ Իկոնիայի սուլ-

8 Թիլ-Համդունը Դաշտային Կիլիկիայի գլխաւոր բերդերից է, յայտնի է նաև Համտուն անուանումով: ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Հ. Մ. Վրդ., Հայկական Կիլիկիոյ բերդերմ եւ բերդաբանութեան պատմութիւնները, Վեճետիկ, Ս. Ղազար, 1989, էջ 288:

9 ՄԻԽԱՅԻԼ ԱՍՈՐԻ, Ժամանակագրութիւն, Նրուասղէմ 1970, էջ 525: ԻԲՆ ԱԼ-ԱՍԻՐ, Հիակատար պատմութիւն, (թրգ., առջը. եւ ծնը.), ՏԵՐ-ՂԵՒՈՒԹԵԱՆ, Ա., Օտար աղրիւրմերը Հայաստանի եւ հայերի մասին, 11, Արարական աղրիւրմեր, Խո. Բ., Երեւան, 1981, էջ 332: Տե՛ս նաև ՏԵՐ-ՂԵՒՈՒԹԵԱՆ, Վ., Կիլիկեան Հայաստանը եւ Մերձաւոր Արեւելքի արարական երկրմերը 1145-1226 բուականներին, Երեւան, 1994, էջ 131:

10 ԻԲՆ ԱԼ-ԱՍԻՐ, անդ, էջ 332:

թանութեան զօրքերը, մտնելով Կիլիկիայի Հայկական թագաւորութեան սահմանները, գրաւում են ձանճի, Կանչի եւ Մազուխաչ բերդերը¹¹. «Խակ հայր նորա բրինճն Անտիոքու լուեալ՝ տրտմեցաւ յոյժ եւ զի անկարանայր առնուլ զվրէծն որդւոյն առաքէ առ Ալադին սուլտանն Հռումոց, որոյ եկեալ էառ զՃանեին եւ զկանչին, եւ զՄազու խաչն, եւ արար վնաս բազում ի լեռնակողմանս...»¹²: Թէեւ պատմիչների տեղեկութիւններում որոշակի տարբերութիւններ կան գրաւուած բերդերի թուի վերաբերեալ, սակայն այստեղ կարեւորն այն է, որ Միքայէլ Ասորին նշում է այն բերդերի անունները, որոնք նուաճուել էին դաշնակիցների կողմից: Կարեւորենք նաեւ այն փաստը, որ յիշեալ պատմիչը նոյնպէս հաստատում է, որ իկոնիայի սուլթանութիւնը միացաւ Կիլիկեան Հայաստանի դէմ պատերազմին, որով էլ խիստ անբարենպաստ իրավիճակ ստեղծուեց Հայկական թագաւորութեան համար: Այս պայմաններում հայոց թագաւորութեան դիւանագիտական ծառայութիւնը ճիշտ ռազմավարութիւն է ընտրում եւ, գիտակցելով խնդրի լլջութիւնը, դաշնակցում Հալէպի սուլթանութեան հետ¹³, որպէսզի նրանց միջամտութեամբ կանխի հայկական թագաւորութեան դէմ միասնական արշաւանքի ծրագրերը: Եւ այդ հարցում Կիլիկիայի Հայկական թագաւորութեան դիւանագիտները չեն սխալում: Հարկ ենք համարում նաեւ ընդգծել, որ Հալէպի սուլթանութիւնն օգնութեան հասաւ հայերին ոչ միայն այն բանի համար, որ իրեն ճեռնտու չէր իկոնիայի սուլթանութեան հզօրացումը, այլ նաեւ Անտիոքի դքսութեան: Այդ օգնութեան առաջին վկայութիւնն այն է, որ Հալէպի սուլթանութիւնը մեծ ճնշումներով ստիպում է Անտիոքի դքսութեանը հրաժարուել իր նուաճողական ծրագրերից: Պատմիչ իբն Ալ-Ասիրը տեղեկացնում է, որ Հայկական թագաւորութեան համար չափազանց շահեկան եղաւ հիւանդախնամ եւ տաճարական ասպետների Բուհեմոնդին չմիանալը՝ դէպի Կիլիկեան Հայաստան արշաւելու¹⁴: Այստեղ հարց է առաջանում, թէ որն է վերջիններիս՝ իկոնիայի սուլթանութեան եւ Անտիոքի դքսութեան զօրքերին չմիանալու պատճառը: Կարծում ենք՝ այստեղ կարող է լինել երկու մօտեցում. հայոց թագաւորութեան արտաքին գե-

11 Տե՛ս ՅՈՎՀԱՆՆԻԿՍԱՆ, Հ. Մ. վրդ., անդ, էջ 167, 170, 185:

12 ՄԻՒՍԱՅԵԼ ԱՄՈՒԻ, անդ, էջ 518:

13 ՏԵՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ, Վ., անդ, էջ 132:

14 ԻԲՆ ԱԼ-ԱՍԻՐ, անդ, էջ 252:

րատեսչութեան զեկավարները, գիտակցելով խնդրի լրջութիւնը, գաղտնի բանակցութիւններ վարեցին նրանց հետ եւ հասան վերջիններիս՝ արշաւանքին չմիանալու համաձայնութեանը։ Զի բացառութմ նաեւ, որ դրա դիմաց հայոց թագաւորութիւնն որոշ Փինանսական կամ տարածքային նուիրատութիւն կատարած լինի։ Հնարաւոր է նաեւ, որ պապն է արգելել նրանց դա անել, քանի որ հայկական թագաւորութեան աշխարհագրական դիրքը կարեւոր էր ռազմավարական տեսանկիւնից։ Ամէն դէպքում՝ հայոց թագաւորութիւնը նշեալ ժամանակահատուածում ճիշտ դիւնագիտութիւն է կիրառում, որով էլ կանխւում են սպասուելիք ապագայ արհաւիրքները։ Այս քայլը ցոյց է տալիս, որ հայոց արքունիքում գործում էին խելացի, հաշուենկատ, թագաւորութեան ապագայի մասին մտածող դիւնագէտներ։

1226ին Կիլիկիայի հայոց գահին է բազմում Հեթում Ա.ը (1226-1269), որն անմիջապէս ճանաչում է իկոնիայի սուլթան Ալա էղ-դին Քեյ-Կոբաղի գերիշխանութիւնը եւ վերահաստատում այն դաշինքը, որ 1218ին կնքուել էր Լեւոն Մեծագործի եւ սելջուկեան սուլթան իզ էղ-դին Քեյ-Քառուսի միջեւ։ Այդ վկայում է նաեւ միջնադարի հայ պատմիչ Կիրակոս Գանձակեցին։ Հստ նրա՝ թէեւ հայերը հաւատարմութեան երդում են տալիս իկոնիայի սուլթանին, սակայն դա չի փոխում Կիլիկիայի հայկական թագաւորութեան կախումը սելջուկներից։ «Հնազանդէր սիրով, եւ զոչ հնազանդսն բառնայր ի միջոյ...Արար սէր եւ միաբանութիւն ընդ սուլտանին հոռոմոց, որում անուն էր Ալադին, որ ունէր զրագում աշխարհս ընդ ձեռամբ իւրով»¹⁵։ Հեթում Ա. արքայի նման վարքագիծը բացատրուում է հետեւեալ կերպ։ Հայոց արքան, տեղեակ լինելով նախորդ տարիների իրադարձութիւններին, այդ քայլին էր դիմել, որպէսզի վերջնական խաղաղութիւն հաստատուի երկու պետութիւնների միջեւ։ Այս հարցում կարեւոր էր նաեւ այն, որ ժԳ. դարի 20ական թուականներին իկոնիայի սուլթանութիւնը գտնուում էր իր ուժերի ծաղկման շրջանում եւ լուրջ անհանգստութիւններ կարող էր պատճառել հայկական թագաւորութեանը։ Չմոռանանք, որ հայոց թագաւորութիւնն այդ ժամանակ չունէր հիմնական եւ ուժեղ դաշնակիցներ, որոնք ըստ անհրաժեշտութեան օգնութեան ձեռք կը մեկնէին ընդդէմ ընդհանուր թշնամու։ Կարծում ենք, այդ

15 Կիրսկոս ԳԱՆԶԱԿԵՑԻ, Պատմութիւն հայոց, (աշխտ. ՄԵԼԻՔ-ՕՀԱՆԶԱՆՑԱՆ, կ. Ա.), Երևան, 1961, էջ 190։

փաստը գիտակցում էին ինչպէս նորընծայ արքայ Հեթում Ա.ը, այնպէս էլ նրա հայրը՝ Կոստանդին սպարապետը, եւ միւս հայ մեծամեծ իշխանները։ Շուտով հայոց թագաւորութեան եւ իկոնիայի սուլթանութեան միջեւ նոր պայմանագիրը է կնքում¹⁶, որը որոշակիօրէն տարբերում էր 1218 թուականին կնքուած պայմանագրից։

Մինչ պայմանագրի բովանդակային դրոյթներին անդրադառնալը, կը ցանկանայինք նախեւառաջ կանգ առնել այն հարցի վրայ, թէ ո՞ր թուականին է կնքուել այն։ Դժբախտաբար, այդ մասին հաղորդումները սակաւաթիւ են միջնադարեան պատմիչների երկերում։ Հեթում Ա. արքայի եւ իկոնիայի սուլթան Ալայ էդ-դին Քեյ-Կորաղի միջեւ հաշտութեան բանակցութիւնների եւ կնքուած պայմանագրի մասին հայոց պատմիչներից առաջինը խօսում է ԺԳ. դարի Կիլիկեան Հայաստանի նշանաւոր պետական, քաղաքական եւ զինուորական գործիչ Սմբատ Սպարապետը, համաձայն որի՝ երկու պետութիւնների միջեւ նոր պայմանագրում է 1226ին. «Ի քուին ՈՀԵ եղեւ ուրախութիւն Հայոց. եւ եղին մեծ սէր ընդ Հռոմայ Պապն, եւ ընդ Ալամնաց Օնբրունն. եւ ընդ Ալատին Սուլտանն Հռոռմոց»¹⁷։ Նշեալ խնդրի վերաբերեալ տեղեկութիւն ենք ստանում նաեւ նշանաւոր պատմիչ Միքայէլ Ասորու ժամանակագրութիւնից։ Ըստ պատմիչի՝ այն կնքուել էր դարձեալ 1226ին. «Ի քուին Հայոց ՈՀԵ 675 միարանութեամբ ամենայն իշխանացն տուին զԶապէլ դուստր Լեւոն քագաւորին ի կնութիւն Հեթմոյ որդւոյ պարոն Կոստանդեայ, եւ քագաւորեցուցին ի վերայ Հայոց, որ էր տղայ հասակաւ. եւ հայր նորա կարգաւորէր զբագաւորութիւն որ եւ արար սէր ընդ Ալադին սուլտանն եւ հետապնդեցաւ...»¹⁸։ Ինչպէս նկատում ենք, թէ՝ Սըմբատ Սպարապետը եւ թէ՝ Միքայէլ Ասորին Կիլիկիայի հայկական թագաւորութեան եւ իկոնիայի սուլթանութեան միջեւ կնքուած պայմանագիրը թուագրում են նոյն՝ 1226ով։ Միւս պատմիչների մօտ նշեալ խնդրի մասին այլ հաղորդման չենք հանդիպում։ Կարծում ենք, որ Միքայէլ Ասորու եւ Սմբատ Սպարապետի տեղեկութիւնները ճշմարիտ են, քանի որ դրանք ունեն ծանրակշիռ հիմքեր։ Դա է վկայում այն, որ Սմբատ

16 ՄԻԽԱՅԷԼ ԱՍՈՐԻ, անդ, էջ 518-519: ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Պատմութիւն, Մովուայ, 1856, էջ 112: Տես՝ ՊՏՈՒԿԵԱՆ, Զ., Կիլիկեան Հայաստանի դրամմերը, Վիեննա, 1963, էջ 93։

17 ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, անդ, էջ 112։

18 ՄԻԽԱՅԷԼ ԱՍՈՐԻ, անդ, էջ 518-519։

Սպարապետն ու Միքայէլ Ասորին արժանահաւատ աղբիւրներ են համարում ժամանակակից պատմագրութեան մէջ։ Միւս կողմից՝ Սմբատ Սպարապետը եղել է գրեթէ բոլոր դէպքերին ականատես, եւ հաւանականութիւնը փոքր է, որ նա ոչ ճշգրիտ տեղեկութիւն հաղորդէր։

Այդ պայմանագրին մասին Ա. Ալպոյանեանը տեսակէտ է յայտնում, որ կնքուել է Հեթում արքայի ամուսնութիւնից քիչ յետոյ՝¹⁹։ Այդ ամուսնութիւնը տեղի է ունեցել 1226ի գարնանը, որից ենթագրում ենք, որ այն կնքուել է 1226ին։ Նոյն՝ 1226ի օգտին տեսակէտ է յայտնում նաեւ Լ. Տէր-Պետրոսեանը²⁰։ Հարցի շուրջ կարծիք է յայտնում նաեւ Զ. Պտուկեանը, ըստ որի՝ պայմանագիրը կնքուել է 1228ին²¹, սակայն որեւէ որոշակի աղբիւրով չի հիմնաւորում իր տեսակէտը։ Քննարկուող հարցի շուրջ իր տեսակէտն է յայտնել նաեւ Ս. Բոռնազեանը, համաձայն որի պայմանագիրը կնքուել է 1220ին²², առաջ է քաշում իրն Բիբիի վկայութիւնը, ըստ որի հայոց արքան համաձայնուեց համատեղ դրամ կտրել՝ մի երեսին Հեթում Ա. արքայի, իսկ միւս երեսին իկոնիայի սուլթան Ալա Էղ-դին Քեյ-Կոբադի պատկերներով²³։ Դժուար է համաձայնուել հեղինակի նման պնդման հետ, քանի որ 1220ին Հեթում Ա.ը դեռեւս կիլիկիայի արքան չէր եւ չէր կարող նման պայմանագիր կնքել։ Բացի վերոնշեալ անձանցից՝ կան մի խումք գիտնականներ, որոնք, հաշուի առնելով խնդրի բարդութիւնը, շրջանցում են պայմանագրի կնքման թուականը եւ չեն խօսում այդ մասին²⁴։

Այսպիսով՝ ուսումնասիրելով միջնադարեան սկզբնաղբիւրների տեղեկութիւնները, ինչպէս նաեւ ժամանակակից գիտական գրականութիւնը՝ գալիս ենք այն եղբակացութեան, որ երկու պետութիւնների միջեւ պայմանագիրը կնքուել է 1226ին։

Այժմ անդրադառնանք պայմանագրի բովանդակային դրոյթներին։ Սմբատ Սպարապետը, որը տեղեկութիւններ է հաղոր-

19 ԱԼՊՈՅԱՆԱՆ, Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, Գահիրէ, 1937, էջ 512:

20 Տէր-Պետրոսեան, Լ., անդ, էջ 299:

21 ՊՏՈՒԿԵԱՆ, Զ., անդ, էջ 11-12:

22 Հայ Ժաղովրդի պատմութիւն, Խո. Գ., Երևան, 1976, էջ 700:

23 Անդ:

24 ՄՈՒԹԱՖԵԱՆ, Կ., Կիլիկիան կայսրութիւնների խաչմերուկում, Երևան, 2001, էջ 411-412: ՄԻՔԱՅԼԵԱՆ, Գ., Կիլիկիայի հայկական պետութեան պատմութիւն, Երևան, 2007, էջ 176-177:

դում նշեալ դէպքերի մասին, պայմանագրի եւ նրա բովանդակացին դրոյթներից գրեթէ ոչինչ չի նշում՝ հետազօտողներին դնելով ծանր կացութեան մէջ²⁵: Ինչով բացատրել պատմիչի նման դիրքորոշումը: Կարծել, թէ Մբատը տեղեակ չէր պայմանագրի բովանդակութեանը, մեղմ ասած միամտութիւն կը լինի:

Առաւել հաւանական կարող է լինել այն տեսակէտը, որ դէպքերին ժամանակակից հայ պատմիչը, հասկանալով, որ Կիլիկիայի հայկական թագաւորութիւնը պարտուղական պայմանագիր է կնքում՝ թշնամուն զիջելով մի շարք կարեւոր տարածքներ եւ գնալով այլ զիջումների, չի ցանկացել դրանք իրազեկել գալիք սերունդներին:

Խնդրոյ վերաբերեալ մի փոքր հաղորդման ենք հանդիպում Միքայէլ Ասորու ժամանակագրութեան մէջ: Հեղինակը նշում է, որ հայոց արքան հնազանդութիւն յայտնեց Իկոնիայի սուլթանին՝ պարտաւորուելով նրան տարեկան 300 զինուոր ծառայութեան տալ. «Եւ հնազանդեցաւ նմա՝ տալու նմա յամենայն ամի երեք հարիւր այր ի ծառայութիւն»²⁶: Ինչպէս նկատում ենք, այս հեղինակի տեղեկութիւնները եւս բաւարար չեն: Պէտք է նաեւ նշել, որ սոյն հարցի մասին որոշ տեղեկութիւններ կան նաեւ իբր Բիբիի աշխատութիւնում: Այս ժամանակագիրն էլ փաստում է, որ Ալա իդ-դին Քեյ-Կոբադին հարկ էին վճարում մի շարք երկրներ, այդ թուում նաեւ Կիլիկիայի հայկական թագաւորութիւնը: Բացի այդ՝ հայոց արքան պարտաւորում էր Իկոնիայի սուլթանին տրամադրել 1000 ձիաւոր եւ 500 աղեղնաւոր²⁷: Կարծում ենք՝ Միքայէլ Ասորու տեղեկութիւնը աւելի ճշգրիտ է, քանի որ վերջինս չէզոք պատմիչ է, իսկ իբր Բիբին, լինելով սելջուկեան պետութեան ջատագովը, փորձել է գերագնահատել սուլթանութեան ձեռք բերած յաղթանակը: 1000 ձիաւորի մասին հաղորդումը չափազանցուած է, եւ այլ հեղինակների կողմից այն չի հաստատում: Թէ որքան էր կազմում վճարուելիք գումարը, դժբախտաբար սկզբնաղբիւրներում նման տեղեկութիւն չի պահպանուել:

Այժմ տեսնենք, թէ ինչպիսի տեսակէտներ են հաղորդում ժամանակակից հետազօտողները: Առաջին հետազօտողներից մէկը

25 ՄՄԲՍ. ՍՊԱՐԱՊԵՏ, անդ, էջ 112:

26 ՄԻՒԱՑԷԼ ԱՍՈՐԻ, անդ, էջ 519:

27 ՄՈՒԹԱՖԵԱՆ, Կ., անդ, էջ 471:

եղել է Ա. Ալպոյանեանը։ Նրա կարծիքով՝ հայոց արքան ընդունում է իկոնիայի սուլթան Ալա կղ-դին Քեյ-Կոբաղի գերիշխանութիւնը եւ նորոգում այն դաշինքը, որ կնքուել էր Լեւոն Մեծագործի եւ սուլթան իզ կղ-դին Քեյ-Քառասի միջեւ²⁸։ Բացի այս կարծիքից՝ հետազօտողը որեւէ այլ տեսակէտ չի արտայայտում պայմանագրի մասին։ Հետազօտուող ինդրին շատ մակերեսօրէն անդրադարձել են Կիլիկեան Հայաստանի պատմութեան նշանաւոր հետազօտողներ Գ. Միքայէլեանը եւ Լ. Տէր-Պետրոսեանը²⁹։ Համաձայն այս հետազօտողների՝ հայոց արքան ճանաչում է իկոնիայի սուլթանի գերիշխանութիւնը եւ պարտաւորում միասնական դրամ կտրել։ Ինչպէս նկատում ենք, հետազօտողները բաւականին հետաքրքիր եւ կարեւոր տեսակէտ են յայտնում պայմանագրի մասին։ Համոզուած ենք, որ Գ. Միքայէլեանի եւ Լ. Տէր-Պետրոսեանի տեսակէտները ճշգրիտ են, քանի որ նման դրամներ իրականում թողարկուել են եւ աւանդուել մեզ։ Մասնաւորապէս պահպանուել են արաբերէն լեզուով թողարկուած երկու տեսակի դրամներ, որոնցից մէկում պատկերուած են Կիլիկիայի հայոց արքայ Հեթում Ա.ի եւ Ալա կղ-դին Քեյ-Կոբաղի, իսկ միւսում՝ հայոց արքայի եւ Գիյաս կղ-դին Քեյ-Խոսրով Բ.ի պատկերները։ Կարծում ենք, որ թողարկուած դրամները ոչ միայն պարտադրուած էին այն պայմանով, որպէսզի շեշտուի հայոց թագաւորութեան կախուածութիւնը սուլթանութիւնից, այլ նաեւ այն բանի համար, որպէսզի զարկ տրուի երկու պետութիւնների միջեւ առեւտրատնտեսական յարաբերութիւնների զարգացումը։ Թողարկուած դրամների մասին փաստը հետազօտել է Զ. Պտուկեանը, որը մէկ անգամ եւս ապացուցում է նախորդ հետազօտողների արտայայտած կարծիքները³⁰։ Նշենք, որ թողարկուած այդ դրամների քանակը շատ քիչ է եղել, որն էլ բերում է մեզ այն համոզման, որ հայոց թագաւորութիւնն ընդամէնը վասալական կախուածութիւն է ունեցել իկոնիայի սուլթանութիւնից։ Հետազօտուող թեմային անդրադարձել է նաեւ Կ. Մութաֆեանը՝ որեւէ նոր տեսակէտ չարտայայտելով³¹, ևս հետազօտող Ս. Բոռնագեանի՝ իկոնիայի սուլթանին յատ-

28 ԱԼՊԸՆՃԵԱՆ, Ա., անդ, էջ 512։

29 ՄԻՔԱՅԵԼԵԱՆ, Գ., անդ, էջ 177։ Տէր-ՊԵՏՐՈՍԵԱՆ, Լ., անդ, էջ 299-300։

30 ՊՏՈՒԿԵԱՆ, Զ., անդ, էջ 12։

31 ՄՈՒԹԱՖԵԱՆ, Կ., անդ, էջ 411-412։

կացուած ձիաւորների քանակը 100 է³²: Ինչ վերաբերւում է աղեղնաւորների քանակին, ապա այս հարցում Ս. Բոռնազեանը նշում է 500 թիւը³³: Պէտք է նշել, որ այստեղ կայ կասկածելի մէկ հանգամանք: Հետազօտող Ս. Բոռնազեանը, թէեւ նշում է, թէ այդ տեղեկութիւնները հաղորդում է իրն Բիբին, սակայն բերում է այլ աղբիւր³⁴: Ս. Բոռնազեանի առաջ քաշած տեսակէտը չենք կարող անաւարկելիօրէն ընդունել, քանի որ հետազօտողը չի ապացուցում իր առաջադրած տեսակէտը եւ արագօրէն շրջանցում է նշեալ խնդիրը: Համզուած ենք, որ գոյութիւն ունի մի կարեւոր դրոյթ եւս: Ամենայն հաւանականութեամբ երկու կողմերը համաձայնութեան եկան նաեւ այն հարցում, որ հայոց արքան հարկ եղած դէպքում պիտի մասնակցի իկոնիայի սուլթանութեան ռազմական արշաւանքներին: Այդ է վկայում այն փաստը, որ երբ 1230ին Զալալ էդ-դինի գօրքերը մօտենում են մերձաւորաբեւելիան տարածաշրջանին, Կիլիկիայի հայոց գօրքերը դաշնակցեցին իկոնիայի սուլթան Ալա էդ-դին Քել-Կորադի եւ Աշրաֆ Այուբեանի հետ եւ եռօրեայ ճակատամարտում ջախ-ջախում թշնամու գօրքերին³⁵:

Այսպիսով՝ քննելով միջնադարեան սկզբնաղբիւրների տեղեկութիւնները եւ հետազօտելով ժամանակակից գիտական գրականութիւնը՝ գալիս ինք այն եղրակացութեան, որ Կիլիկիայի հայկական թագաւորութեան եւ իկոնիայի սուլթանութեան միջեւ կնքուած պայմանագրի բովանդակային դրոյթներն յանդում են հետեւեալին.

1. Կիլիկիայի հայկական թագաւորութիւնը ճանաչում է իկոնիայի սուլթանութեան գերիշխանութիւնը:

2. Հայոց արքայ Հեթում Ա. պարտաւորուում է իկոնիայի սուլթանին տրամադրել տարեկան 300 նիզակակիր:

32 Հայ ժողովրդի պատմութիւն, անդ, էջ 700:

33 Անդ:

34 MANE, H., *Le sultan seljukcide Keykulod I et I Armenie*, REA, 1929, p. 116, յդումը կատարւել է. Հայ ժողովրդի պատմութիւն, հա. Գ., էջ 700:

35 ՍԱՄՈՒԷԼ Ա.ՆԵՑԻ, Հաւաքմումք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 150: ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, Ա., անդ, էջ 166-167: ԱԲՈՒԼ-ՖԻԴԱ, ԱԼ-ՀԱՄԱՐԻ, ԵԱԿՈՒՏ, Արարական աղրիքմերը Հայաստամի եւ հարեւամ երկրմերի մասին, (աշխա. ՆԱԼԻԱՆԴԻԱՆ, Հ.), Երեւան, 1965, էջ 235: *The Chronography*, անդ, էջ 394-395: Տե՛ս BOASE, T., *The Kingdom of Cilician Armenia*, London, 1978, p. 23:

3. Կիլիկեան Հայաստանը Իկոնիայի սուլթանութեանն էր զիջելու մի շարք տարածքներ, որոնք գրաւել էին սելջուկեան զօրքերը: Դրանք էին կալոնորոսից մինչեւ կոռիկոս ընկած տարածքները եւ Սեւիլիան:

4. Հայկական թագաւորութիւնը կրկնապատկում է իկոնիայի սուլթանութեանը տրուող հարկերի քանակը:

5. Կիլիկիայի հայկական թագաւորութիւնը պարտաւորում է իկոնիայի սուլթանութեան հետ համատեղ թողարկել միասնական դրամ՝ մի երեսին հայոց արքայի, իսկ միւս երեսին՝ Սելջուկեան սուլթանների պատկերներով:

6. Կիլիկեան Հայաստանը պարտաւորում է մասնակցել իկոնիայի սուլթանութեան՝ ապագայում ծրագրաւորուող արշաւանքներին:

7. Հայկական թագաւորութիւնը դառնում է իկոնիայի սուլթանութեան դաշնակիցը եւ բարեկամը:

Սրանք էին Հեթում Ա. արքայի եւ իկոնիայի սուլթան Ալա Էդ-դին Քեյ-Կոբադի միջեւ կնքուած պայմանագրի բովանդակային դրոյթները: Ինչպէս նկատում ենք, նշեալ պայմանագրով Կիլիկիայի հայկական թագաւորութիւնը որոշակի փոփոխութիւններով վերահաստատում է տարիներ առաջ Լեւոն Մեծագործի եւ իկոնիայի սելջուկ սուլթան իզ Էդ-դին Քեյ-Քառուսի միջեւ կնքուած հաշտութեան պայմանագրիրը: Եթէ 1218ի պայմանագրով Կիլիկիայի հայկական թագաւորութիւնը ունեցաւ տարածքային կորուստներ եւ ճանաչեց սուլթանութեան գերակայութիւնը, ապա այժմ դրանց աւելանում էր նաեւ միասնական դրամ կտրելը եւ այլ պարտաւորուածութիւններ: Այս փաստը չափազանց կարեւոր է երկու պետութիւնների յարաբերութիւնների քննութեան հարցում:

Հայկական թագաւորութեան այդ վասալական կախուածութիւնը շարունակում է մինչեւ ԺԳ. դարի քառասնական թուականների առաջին կէսերը, այսինքն՝ այն ժամանակահատուածը, երբ տարածաշրջանում յայտնուում են մոնղոլները: Փաստօրէն, նշեալ պայմանագրով հայկական թագաւորութիւնը կրկին դառնում է իկոնիայի սուլթանութեան վասալը³⁶ եւ ընկնում որոշակի կախուածութեան մէջ: Այդ կախուածութիւնը հիմնականում վերաբերում էր թագաւորութեան արտաքին քաղաքականութեա-

36 ՄԻՔԱՅԻԼԵԱՆ, Գ., անդ, էջ 177: ՊՏՈՒԿԵԱՆ, Զ., անդ, էջ 93.

Նը: Մասնաւորապէս իկոնիայի սուլթանութեան համար կարեւոր էր ոչ միայն կիլիկիայի աշխարհագրական՝ դիրքը, այլև հարկ եղած դէպքում հայկական թագաւորութեան ռազմական ուժի օգտագործումը: Ի հակադրութիւն սրա՝ երկրի ներքին քաղաքականութեան հարցերում կիլիկիայի թագաւորութեան ղեկավարութիւնն ամբողջովին մնում էր անկախ: Փաստենք, որ նմանատիպ իրավիճակ է ստեղծւում նաև այն ժամանակ, երբ հայոց թագաւոր Հեթում Արք պայմանագիր կնքեց մոնղոլական պետութեան առաջնորդ Մանգու մեծ խանի հետ: Այս փաստը մէկ անգամ եւս ցոյց է տալիս որ, իրօք, տարածաշրջանի պետութիւններին հետաքրքրում էր բացառապէս կիլիկիայի արտաքին քաղաքականութիւնը: 1226ի պայմանագրի կնքումից յետոյ հայկական թագաւորութեան յարաբերութիւններն իկոնիայի սուլթանութեան հետ բաւականին բարելաւուում են: Եթէ նախորդ տարիներին կիլիկիայի հայկական թագաւորութիւնը ստիպուած էր դիմագրաւել իկոնիայի սուլթանութեան արշաւանքները դէպի կիլիկեան Հայաստան, ապա այս պարագայում սկսում է հանդէս գալ որպէս դաշնակից, մասնակցում ընդհանուր թշնամու դէմ պայքարում: Կարծում ենք, որ այս նուաճմանը հայկական թագաւորութիւնը կարողանում է հասնել հայ դիւանագէտների ճշգրիտ գործունէութեան շնորհիւ:

ԱՐԱՄ ՑՈՎՃԱՆՍԻՍԵԱՆ

Summary

THE HISTORY OF THE RELATIONSHIP BETWEEN THE CICILIAN KINGDOM OF ARMENIA AND THE SULTANATE OF ICONIUM

ARAM HOVHANNISYAN

The article focuses on the history of the relationship between the Armenian Kingdom of Cilicia and The Iconium Sultanate referring particularly to the 20-ies of the XIII century. The first part is an overview of their bilateral military and diplomatic negotiations. The author, based on medieval sources, introduces the details of the Iconium Sultanate invasion on Cilician Armenia and the territorial losses of the Armenian Kingdom.

In the second part, the author, for the first time in historiography, introduces the Treaty of Peace between the Armenian King Hetum I and the Iconium sultan Aladdin Kayqubad I. The author states and proves that the agreement between the two countries was signed in 1226 and not in 1228 as stated earlier. The article focuses on the content of the Treaty of Peace as well as the situation that prevailed in the foreign policy of the Armenian Kingdom of Cilicia after the signing of the Treaty.